



Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ԶՈՐԵՔՆԱԲԹԻ, 18 ՄԱՅԻՍԻ 2016Թ.
№ 16 (392)

**Մեզանից ի՞նչ են ուզում,
Ախր մենք ո՞ւմ ենք վնասել:
Եղբայրներ շատ ունեինք,
Ինչո՞ւ ենք մենակ մնացել...
Չի բռնում մրանց լեզուն
Սի անգամ մեր մի լավն ասել,
Թե ինչ է, հանկարծ
Փորձել ենք մեր հին ցավն ասել:**

ՀԱՍՈՒՍԱՅԱՆ



ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարը՝ Սյունիքում

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանն ապրիլի 22-ին աշխատանքային այցով եղել է Սյունիքի մարզում: Այցի ընթացքում նախարարին ուղեկցել են Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը, ՍԱՊԾ պետ Արմեն Աբրահամյանը, ՍԱՊԾ պետի տեղակալ Վահագն Գրիգորյանը եւ պաշտոնատար այլ անձինք:

Նախարար Արտեմ Ասատրյանն աշխատանքային այցի շրջանակներում հանդիպել է Սյունիքի մարզի սոցիալական պաշտպանության ոլորտի պատասխանատուների հետ, քննարկել ոլորտի խնդիրներն ու իրականացվող ծրագրերի ընթացքը, խոսել ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման մասին: «Երբ մենք խոսում ենք ինտեգրված սոցիալական ծառայությունների մասին, պետք է հստակ հասկանանք, որ առաջին հերթին խոսում ենք զնահատված կարիքի հիման վրա ծառայություններ մատուցելու մասին: Համրապետությունում գործող տասնութ մասն կենտրոնների կողքին առաջիկայում Սյունիքի մարզում եւս կբացվեն համալիր սոցիալական ծառայությունների կենտրոններ: Այդ կենտրոնների գործունեության արդյունավետությունը պետք է առավել բարձրացվի եւ արվի հնարավորը, որպեսզի քաղաքացին զանազան դեմեր բախելու փոխարեն օգտվի «մեկ պատուհանից»»: Այս համատեքստում նախարարը կարեւորել է քաղաքացու մեկ միասնական ընդունարանի միջոցով դիմում ընդունելու գործընթացը եւ քաղաքացու նախնական խորհրդատվության մատուցումը:

Նախարարը տարածքային կենտրոնների ղեկավարներին ներկայացրել է նաեւ ազգային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագիրը եւ դրա շրջանակներում աջակցության ցանցերի ձեւավորման գործընթացը: Արտեմ Ասատրյանը մշել է, որ այստեղ պետք է համատեղվեն թե՛ պետական, թե՛ ոչ պետական հատվածի ռեսուրսներն ու ուժերը: «Համաձայնագրի շրջանակներում նախատեսվում ենք ոչ պետական հատվածի անբողջական եւ լիարժեք ներգրավվածությունը քաղաքացու զնահատված կարիքի հիման վրա ծառայությունների մատուցման մեջ, քանի որ մեր բոլորի նպատակը մեր քաղաքացուն աջակցելն է եւ նրանց խնդիրները լուծելը», - ընդգծել է նախարարը:

Զբաղվածության պետական ծրագրերի մասին խոսելիս նախարար Արտեմ Ասատրյանն առանձնացրել է ժամանակավոր զբաղվածությունն ապահովող վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագիրը եւ խոսել ծրագրի արդյունավետության մասին: Նախարարն արդյունավետ է գնահատել նաեւ մարզում կայուն զբաղվածության ծրագրերի իրականացումը:

Հանդիպման ավարտին նախարարը տարածքային կենտրոնների ղեկավարներին հորդորել է տեղական սոցիալական ծրագրերը մշակել տվյալ համայնքի իրավիճակից ելնելով՝ կարիքների գնահատման հիման վրա, եւ զուգակցել քաղաքացիների ու համայնքի խնդիրների լուծումները:

«Այս առումով բոլորիդ հորդորում են անբողջությամբ ընդգրկվել գործընթացների մեջ, քանի որ սա է միակ ճանապարհը, որպեսզի մենք կարողանանք սոցիալական

Հրաշակերտ կործող՝ Արցախյան գոյամարտի նահապետների հիշատակը հավերժացնող

Մեծ հայրենակամուն զոհված գործընկերների հիշատակը հավերժացնող հուշարձանի հարեւանությամբ այլեւս ու ընդմիջտ կհառնի Արցախյան գոյամարտի նահապետների հիշա-

տակին նվիրված եւ մեր նորոյա հերոսամարտը փառաբանող չքնաղ մի կործող:

Գործիսուն մինչ այդ պատշաճորեն հավերժացված չէր Արցախյան հերոսամարտում զոհ-

ված հայրդիների հիշատակը:

Ի տարբերություն հանրապետության շատ տարածաշրջանների, Գործիսուն զոհված ազատամարտիկները հողին չեն հանձնվել մեկ միասնական վայրում: 1990-ականների պատերազմական օրերին զոհված ազատամարտիկների հարազատները կամեցան էին իրենց մարտիրոսացած մերձավորին հողին հանձնել տոհմային հանգստարանում, իսկ նրանց կամքը առարկելի չէր:

Տոնական կամ հիշատակի օրերին գործընկերները զոհված ազատամարտիկներին հիշատակի տուրք էին տալիս՝ այցելելով Սպիտակի երկրաշարժի առիթով կառուցված հուշահամալիր, որտեղ կանգնեցված էր նաեւ հիշատակի քար՝ Արցախյան ազատամարտի զոհերին նվիրված:

Այս իրավիճակը ժամանակավոր էր համարվում Գործիսուն...

էջ 4

Իմ առաջարկությունները կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանին

Հարգելի պարոն նախարար

Կրթության հետ կապ ունեցողները չեն զարմանում, որ շատ են խոսակցություններն ավագ դպրոցի չկայացման վերաբերյալ: Բանն այն է, որ ավագ դպրոց են գալիս երեխաներ, ովքեր իրենց իսկ ընտրած հոսքերում չեն կարողանում սովորել, քանի որ հիմնական դպրոցում չեն նախապատրաստվել դրան: Արդյունքում ավագ դպրոցի ֆիզմաթ հոսքում շատ քիչ երեխաներ են սովորում, բնագիտական հոսքն ունենում է միջին ապահովվածություն, մնացած բոլոր աշակերտները «լցվում են» հումանիտար հոսք, կամ էլ, եթե շատ են թույլ, ուղարկվում են այսպես ասած «տուգանային գումարտակ»՝ ընդհանուր հոսք կամ արհեստագործական հոսք, որն ամենեւին ավագ դպրոցի նպատակը չէ: Այստեղից էլ սկսվում է ավագ դպրոցում «չսովորելու» մթնոլորտի ձեւավորումը, որն էլ «քանդում է» այդ հաստա-

տության ուսուցման ողջ համակարգը: Ուրիշ բան էլ հնարավոր չէր սպասել: Ավագ դպրոցի 10-րդ դասարան ընդունվածներից շատերը գալիս են ավարտական ստանալու նպատակով եւ հաճախ, բացակայելով դասերից, իրենց նախընտրած առարկաներն ուսումնասիրում են կրկնուսույցների մոտ: Ավագ դպրոցը դառնում է երկրորդային մի հաստատություն, որը կարելի է այնքանով, որ տալիս է փաստաթուղթ կրթության վերաբերյալ: Սյուն կողմից պարտադիր է դառնում միջնակարգ կրթությունը, եւ պարզվում է, որ շատանալու են ավագ դասարանները, դրանցում մեծանալու է աշակերտների թիվը՝ էլ ավելի իջեցնելով կրթության որակը: Հասկանալի է, որ ավելանալու են նաեւ ֆինանսական ծախսերը: Այստեղ ոչ մի վարչարարական միջոց չի օգնի,

էջ 3



էջ 2



«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում, 13 հոկտեմբերի 2015թ.

«Վարկանիշի արժաթ» մրցանակը՝ Կապանի բժշկական կենտրոնին

Ազգային բիզնես-վարկանիշների միությունն ավարտել է հանրապետության ձեռնարկությունների համապետական ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը: Վիճակագրական վարկանիշային դասակարգման աղյուսակում, որը հիմնված է պետությունների հարկերի և այլ պարտադիր վճարների մասին տեղեկատվության վրա, «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (տնօրեն՝ Սմբատ Օրբելյան) հանրապետության ձեռնարկությունների մեջ

«Արտադրության արդյունավետություն» անվանակարգում ստացել է «Վարկանիշի արժաթ» մրցանակը: Վարկանիշները հաշվառված են բացառապես հիմնվելով հանրապետության տնտեսվարող սուբյեկտների հարկային վճարումների և տնտեսական գործունեության պարտադիր ապահովագրության վճարումների վերաբերյալ հաշվետվությունների, հաշվարկների, տեղեկատվությունների և օրենքով նախատեսված այլ փաստաթղթերի վրա: Ծանուցվում է նաև, որ Կապանի

բժշկական կենտրոնը հրավիրում է մասնակցելու ազգային բիզնես-վարկանիշների միության անդամերկրների տնտեսությունների մրցանակաբաշխության պաշտոնական արարողությանը, որ տեղի կունենա մայիսի 28-ին Բաթումում (Վրաստան)՝ Հայաստանի, Բելառուսի, Վրաստանի, Ղազախստանի, Ռուսաստանի, Ուզբեկստանի և Ուկրաինայի ձեռնարկությունների մասնակցությամբ: **Սեփ. լրագրություն**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը՝ Սյունիքում

Ժառանգության ոլորտին էջ 1 ն հատկացված ռեսուրսները լիարժեք և արդյունավետ կիրառել», - սոցիալական ոլորտի պատասխանատուների հետ հանդիպման ժամանակ նշել է նախարարը:



Նախարար Արտեմ Ասատրյանն ու Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը հանդիպել են նաև համայնքի ղեկավարների և մարզպետարանի աշխատակիցների հետ, քննարկել համալիր սոցիալական ծառայությունների կենտրոնների կարելությունը և տարածքների խնդիրը՝ նշելով, որ առաջիկայում Մեղրի, Կապան, Գորիս և Սիսիան քաղաքներում կգործեն տարածքային կենտրոններ: Համայնքի ղեկավարները, կարելությունը կենտրոնների գործարկումը եւ բարձր զնահատելով դրանց արդյունավետությունը, հանդես են եկել առաջարկով, այն է՝ Ազարակ և Քաջարան քաղաքներում ստեղծել համալիր սոցիալական ծառայությունների կենտրոնի առանձնացված ընդունարաններ, որը հնարավորություն կտա տեղի բնակչությանը սոցիալական ծառայություններ ստանալու համար չհասնել Մեղրի կամ Կապան: Նախարար Արտեմ

Ասատրյանը նշել է, որ բարձրացված խնդիրը ենթակա է քննարկման, և հնարավորության շրջանակներում կտրվեն համապատասխան լուծումներ: Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանն իր հերթին գոհունակություն է հայտնել մարզում իրականացվող սոցիալական ոլորտի ծրագրերից և մատուցվող ծառայություններից՝ նշելով, որ դրանց հետ կապված մարզի բնակչությունը հիմնականում դժգոհություններ չունի:

Մարզպետը շնորհակալություն է հայտնել նախարարին այցի համար և հույս հայտնել, որ մարզ այցելություններն առավել հաճախ կլինեն: Սյունիքի մարզ կատարած աշխատանքային այցի շրջանակներում նախարարը տեղում ծանոթացել է Գորիսում համալիր սոցիալական ծառայությունների կենտրոնի համար առաջարկվող տարածքին: **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկատվական կենտրոն**

Մի հրապարակման հետքերով

Արիսյան իրադարձությունները Սիսիանի պատմության էջերում կմնան որպես ողբերգական կամավորական: Եվ այս օրերին, երբ սգում է ողջ Սիսիանի տարածաշրջանը, որոշ լրատվամիջոցներ փորձում են սիսիանցիների միասնականության, սահմանին կանգնած զինվորին ու կամավորականին նյութապես և հոգեպես աջակցելու գործընթացի վրա ստվեր զգել:

հողվածը, որ ներկայացնում ենք ստորև.

«Սիսիանի քաղաքապետարանի տարածած պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ քառօրյա պատերազմի հենց երկրորդ օրը քաղաքապետարանը, ի պաշտոնե, Սիսիանի քաղաքապետի՝ 2016թ. ապրիլի 2-ի N 31(Ա) կարգադրությամբ, ձեռնամուխ է եղել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության զինծառայողներին և կամավորականներին նյութական օժանդակության տրամադրման աշխատանքների համակարգմանը: Բազմաթիվ սիսիանցիներ թե ֆինանսապես, թե նյութապես իրենց մասնակցությունն են բերել բանակին և զինվորին օգնություն ցուցաբերելու կարևոր գործընթացին:

Մայիսի 14-ին Սիսիանի քաղաքապետարանում տեղի ունեցավ քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի 2016թ. ապրիլի 2-ի N 31 (Ա) կարգադրությամբ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության զինծառայողներին և կամավորականներին նյութական օժանդակության տրամադրման աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծված շտաբի նիստը, որտեղ ներկայացվեց մայիսի 5-ի դրությամբ հանգանակված զույգների մասին հաշվետվություն: Համակարգող շտաբի անդամներից՝ Աղասի Հակոբջանյան (Սիսիանի համայնքի ղեկավար, շտաբի պետ), Հայկ Կարապետյան (ՀՀ Սյունի-

Քաղաքապետարանի պաշտոնական հաղորդագրության համաձայն, ապրիլի 4-ի դրությամբ, հանգանակվել է 7 միլիոն 105 հազար դրամ գումար: Սննդամթերքի և այլ անհրաժեշտության նյութական օգնությունն այստեղ ներառված չէ: Ըստ Սիսիանի քաղաքապետարանի պաշտոնական հաղորդագրության, պարզվում է, սակայն, որ Հայաստանի Հանրապետության և



քի մարզի դատախազի տեղակալ, շտաբի պետի տեղակալ), Կարեն Հովհաննեսյան (համայնքի ղեկավարի տեղակալ, շտաբի անդամ), Նարիկ Բախչյան (Գորիսի ՏՀՏ-ի պետ, շտաբի անդամ), Արկադիա Արշակյան («Հայաստառ» ՊՈԱԿ-ի «Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրեն, շտաբի անդամ), Կարեն Իվանյան (ՀՀ Սյունիքի մարզային սոցիալական ծառայությունների Սիսիանի տարածքային գործակալության տնօրեն, շտաբի անդամ), Սամվել Թանգյան (մարզպետարանի գյուղվարչության պետ, շտաբի անդամ), Տիգրան Վասիլյան (մաքսատան աշխատակից, շտաբի անդամ), Ջիվան Սարգսյան («Հայքըմուղկոյուղի» ՓԲԸ «Հարավային» մասնաճյուղի տնօրեն, շտաբի անդամ), Հարութ Խաչատրյան (Սյունիքի ԳԳՄ Սիսիանի տարածաշրջանի տեղամասի պետ, շտաբի անդամ), Կարեն Հովհաննիսյան («Սիսիանի ԲԿՏ» ՀՈԱԿ-ի տնօրեն, շտաբի անդամ), ներկա էր ութ հոգի, ինչը նշանակում է՝ միստի քվորումն ապահովված էր:

Արցախի Հանրապետության զինծառայողներին և կամավորականներին նյութական օժանդակության տրամադրման նպատակով սիսիանցիների հանգանակված զույգը ծախսվել է ոչ թե բանակի և խրամատում հայրենիքի համար մարտնչող զինվորի կարևորագույն կարիքները հոգալու, այլ՝ ... հաց ուտելու, ինչ-որ մեքենայի վերանորոգման, ինչ-որ վառելիքի ծախսեր անելու վրա...

ԱՐԵՎՅԱՏ ԱՄԻՐՅԱՆ
12. 05. 2016»

Նիստին հրավիրվել էր նաև հողվածի հեղինակ Արեհատ Ամիրյանը, ով ստացել էր համապատասխան ծանուցագիր, սակայն չէր ներկայացել:

«Հրապարակ» թերթի լրագրող Հասմիկ Բաբաջանյանը նույնպես արտասպել է այդ նյութը, սակայն ոչ թե նշելով նյութի ստույգ աղբյուրը, այլ պարզապես գրելով՝ «Արեհատ Ամիրյանը գրում է» և նույնությամբ վերարտադրել վերոհիշյալ հողվածը: Հասմիկ Բաբաջանյանը նաև հետգրություն է թողել. «Երբ փորձեցի ծշտել, թե ինչի վրա է ծախսվել այդ գումարը, որը մարմնով սարսռացի: Sisian. am-ում տեղադրված էր, թե ինչի վրա էր ծախսվել այդ գումարը: Սիսիանցի 9 զոհերի թաղման, դազաղների... վառե-

Հրաշակերտ կոթող՝ Արցախյան գոյամարտի նահապետների հիշատակը հավերժացնող

Եվ ահա հոգեւոր ու բարոյական նշանակության այդ հարցը տարիներ անց իր լուծումը գտավ:

Հրաշակերտ կոթողը ճարտարապետական յուրօրինակ հորինվածք է՝ մի քանի բաղադրատարրերից կազմված, սրբատաշ բազալտից պատրաստված՝ 16,5 մ բարձրությամբ եւ 8,6 մ լայնությամբ:

Գլխավոր բաղադրիչը հաղթական մարմն է՝ Արցախյան գոյամարտում հայ ժողովրդի հերոսությունն արտացոլող:

Հաղթական մարմնի վրա բարձրացող երկու կամարները խորհրդանշուն են հայկական ներկայիս երկու պետության համատեղ ու միասնական ընթացքը:

Հայկական երկու հանրապետությունը Տիրոջ խաչի հովանու ներքո են՝ Բարձրալին ապավինած:

Հաղթական մարմնի վրա փորագրված է բոլորիս երախտիքի տուրքը՝ «Հավերժ փառք Արցախյան հերոսամարտում զոհվածներին»:

Հուշահամալիրի կենտրոնամասում կրակատեղին է կամ կրակնացայտը, որտեղ անմար կրակն է վառվելու: Եվ կրակի ցուրը հանուն հայրենիքի զոհվածների անմահ հոգիներից լույս է սփռելու՝ բորբոք

պահելով նաեւ նահատակ զորիսեցիների հիշատակը:

Նախկինում էլ այդտեղ կրակաբան կար՝ անմար կրակի համար, բայց դա հարմարեցված էր Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին կառուցված հուշարձանին: Հիմա երկու կոթող է, եւ կրակարանը տեղափոխվել է ու դրվել կենտրոնամասում:

Նորակառույց հուշակոթողի վրա չկա հիշատակագիր արձանագրություն, բայց Գորիսում քաջատեղյակ են, որ այն կառուցվել է Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի նախաձեռնությամբ ու ֆինանսական ներդրումով, Սեւադա Ջաքարյանի հեղինակած նախագծով: Կառուցման սկիզբը դրվել է 2013թ. աշնանը: Շինարարության աշխույժ կամ Միրաբեյանն էր, ում վկայությամբ էլ կառույցի վրա ծախսվել է մոտ 250 հազար ԱՄՆ դոլար:

...Մայիսի 8-ի անձրեւտ երեկոյան դեռես շարունակվում էին հուշահամալիրի տարածքի բարեկարգման աշխատանքները. այն դեկավարում էր ինքը՝ Սյունիքի մարզպետը: Ձգտում էր, որ հաջորդ առավոտյան ամեն ինչ պատրաստ լինի տոնակատարության համար:

Իսկ ինչո՞ւ այդ վայրն ընտրվեց



ԼՍԻՄԱԿԱՐԵ Ա. ՄՐԻՅԱՆՍԻ

հուշակոթողի համար:

Հարցի պատասխանը հստակ տրամաբանություն ունի. դա Մեծ հայրենականում զոհված զորիսեցիների հիշատակը հավերժացնող հուշարձանի տարածքն է. հուշարձանը կառուցվել է 1980-ին՝ զորիսեցիների հանգանակած միջոցներով: Նախագծի հեղինակը եւ ճարտարապետը Գեորգ Մուշեղյանն է: Հուշարձանի շրջակայքը վերակառուցվել է 1985-ին՝ Սեւադա Ջաքարյանի նախագծով:

Մեկ տարի առաջ, դարձյալ Սուրեն Խաչատրյանի նախաձեռնությամբ, խաչքար է կանգնեցվել այդտեղ՝ Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցի կապակցությամբ:

Արցախյան գոյամարտում զոհված հայորդիների հիշատա-

կը հավերժացնող հուշակոթողը եւս այդտեղ կառուցելով, կարծես, ամբողջացնում է վայրը եւ վերածվում յուրօրինակ աղոթատեղիի, որտեղ հաղթանակի եւ հիշատակի օրերին կհավաքվեն զորիսեցիները: Այն, անշուշտ, մարդկանց համար կդառնա նաեւ զբոսավայր ու հանգստավայր:

Կամեցանք լսել Սուրեն Խաչատրյանի մտորումները հուշակոթողի վերաբերյալ:

– Վերջին քսան տարում բազում կառույցների, հուշակոթողների եւ հոգեւոր նշանակության շինվածքների նախաձեռնող ու հովանավորող եմ եղել, բայց ամենանշանավորն այս կառույցն է, որովհետեւ արտացոլում է Արցախյան գոյամարտում մեր ժողովրդի հերոսությունը, հավերժացնում մեր նահատակ ազատամարտիկների հիշատակը, խորհրդանշուն Տիրոջ խաչի հովանու ներքո հայկական երկու հանրապետության ընթացքը, – ասաց մարզպետը:

Ապա հավելեց.

– Մայիսի 9-ից հետո հուշահամալիրում աշխատանքները շարունակություն կունենան: Նախ՝ հաղթական մարմնի զարդաքանդակներով կպատվի, իսկ մերձակա տարածքը կվերածվի հանգստյան գոտու, մասնավորապես՝ որ հիմնանորոգվել ու բարեհաճ տեսքի է բերվել համալիրի շարունակությունը կազմող փոքրիկ լճակը՝ մոտ 3,5 կմ հեռավորությունից՝ Շորիձորից ջուր հասցնելով այդտեղ՝ վայրկյանում 10 լիտր: Տարածքի անմիջական հա-



ԼՍԻՄԱԿԱՐԵ Ա. ՄՐԻՅԱՆՍԻ



ԼՍԻՄԱԿԱՐԵ Ա. ՄՐԻՅԱՆՍԻ



ԼՍԻՄԱԿԱՐԵ Ա. ՄՐԻՅԱՆՍԻ

Շրջանում ընկերությունը գտնվող նախկին պիլոններ պալատի առաջին հարկում էլ կհիմնվի Արցախյան հերոսամարտի նահատակներին նվիրված բանգարանը:

Դե ինչ, մեր գոհությունը մատուցենք հրաշալի նորակառույցի նախաձեռնող ու հովանավոր Սուրեն Խաչատրյանին, ճարտարապետ Սեւադա Ջաքարյանին, աշխղեկ Կամո Միրաքյանին ու բոլոր վարպետներին՝ Գորիսին հիասքանչ այդ ստեղծագործությունը պարգևատրելու, Արցախյան հերոսամարտի նահատակ հայորդիների ոգեղեն ներկայությունը մեր քաղաքում մեկընդմիջ ապահովելու համար:

Հիշենք նաև, որ Արցախյան առաջին պատերազմում՝ 1988-94թթ., Գորիսի տարածաշրջանից զոհվեց 81 զինծառայող եւ ազատամարտիկ (ըստ Գորիսի զինկոմիսարիատի տվյալների): Քառօրյա պատերազմում տարածաշրջանից զոհվեց եւս մեկ զինծառայող՝ Նարեկ Մկրտչյանը:

Մեծ հայրենականին Գորիսի տարածաշրջանից մասնակցեց 9146 հոգի, նրանցից այլեւս չվերադարձավ 4144-ը (1381-ը՝ Գորիս քաղաքից):

Թվերը վկայում են, որ մայիսի 9-ը նաև ոգեկոչության օր է յուրաքանչյուրիս համար՝ Մեծ հայրենականում եւ Արցախյան ազատամարտում զոհված մեր հարազատներին ու մերձավորներին հավերժ հիշելու, նրանց հերոսությանը ոգեշնչվելու օր:

Միայն ինչու հազարավոր գորիսեցիներ էին հավաքվել հուշակոթողի բացման արարողությանը: Այն իսկապես վերածվեց աշխարհախումբ տոնահանդեսի, որին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության վարչապետ Զոլիկ Աբրահամյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ կառավարության անդամներ եւ բարձրաստիճան զինվորականներ, զոհված ազատամարտիկների եւ զինվորների ծնողներ, Սյունիքի մարզի բոլոր քաղաքներից ժամանած պատվիրակություններ:

ԱՍՏՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՆԱՆ
10 մայիսի 2016թ.

Սյունիք, Արցախ, մեկը մյուսին՝ գորավիզ

Մայիսի 9-ին գորիսեցիները մեծով-փոքրով հավաքվել էին Հայրենական մեծ պատերազմում զոհվածների պատվին կառուցված հուշարձանի մոտ, որտեղ հիմա վեր է խոյացել նաև Արցախի համար զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողը: Եկել էին մասնակցելու հուշակոթողի բացմանը, եկել էին մեկ անգամ եւ իրենց հարգանքը մատուցելու հերոս ազատամարտիկներին ու նաև ասելու՝ շնորհակալություն, մենք երախտապարտ ենք ձեզ:

Այստեղ է նաև գորիսեցի Դաջունցների գերդաստանի երեք սերունդ՝ Արամայիս Դաջունցը, ով մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Կռվել է Բելոռուսիայում, եղել հետախույզ եւ երկու անգամ «լեզու» բերել, որոնց հայտնած տեղեկությունների շնորհիվ գորիսեցիները հրամանատարությունը հարձակման ճիշտ պահ ընտրեց: Իսկ Արամայիսի թողնելով Արամը, զինվորական է: Ծռոն էլ՝ Արամայիսը, ով պապի անունն է կրում, աթոռ է բերել, որ պապը նստի: Աթոռն հարմար տեղավորվելուց հետո Արամայիս պապն ասում է՝ այսօրվա հերոսը հայ զինվորն ու սպան են, նրանք երակներում մեր արյունն է հոսում: Ուրախ եւ հպարտ են, որ այսպիսի քաջազուն հետնորդներ ունենք: Էլ դարձ չունեն. մեր հողը հուսալի ձեռքերում է: Քիչ լռելուց հետո ասում է՝ ափսոս, կորուստներ էլ ունեցանք, քաջարի տղաներ կորցրինք...

Այդ քաջարի մարտիկների շնորհիվ է, որ այսօր ունենք ազատ, անկախ Արցախ աշխարհ: Իսկ ապրողները չեն մոռանում նրանց: Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի նախաձեռնությամբ եւ հովանավորությամբ Գորիսում վեր է խոյացել Արցախի ազատագրության համար զոհված ազատամարտիկներին

նվիրված հուշակոթող: Հուշակոթող, որ հաղթողների պատմությունն է, նրանց սիրանքի խոսուն վավերագիրը, հուշակոթող, որ այսօրվա հայ զինվորի ու սպայի արիության եւ խիզախության խորհրդանշան է նաև, ու նաև գալիք հաղթանակների ու լուսավոր ապագայի առաջնորդը: Հուշակոթողի մոտ ծաղկեպսակներ են ՀՀ վարչապետից, Սյունիքի մարզպետից, Գորիսի քաղաքապետարանից... Ու ծաղիկներ, ծաղիկներ, դարձյալ ծաղիկներ:

Հուշակոթողի բացումն իրենց ներկայությամբ պատվել են ՀՀ վարչապետ Զոլիկ Աբրահամյանը, նախարարներ, Սյունիքի մարզպետը, Սյունիքի մարզի համայնքապետը, ազատամարտիկներ, զինվորներ ու սպաներ...

Հուշակոթողի բացման ժամանակ Զոլիկ Աբրահամյանը մասնավորապես ասում է.

– Իմ եւ կառավարության անունից շնորհավորում են այս հուշարձանը, որը նվիրված է Արցախում զոհված ազատամարտիկների հիշատակին:

Այս եռատունդ եւս մեկ օր է մեզ համար, որ համախմբվեք բոլորս, ինչպես համախմբվեցինք ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ: Շնորհավորում են, սիրելի գորիսեցիներ, այս հուշարձանի առիթով եւ ցանկանում, որ մենք Հայաստանում, Արցախում, Սփյուռքում տոնենք հայ ժողովրդի միասնական հաղթանակները:

Ամբիոնին է մոտենում Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը.

– Մայիսյան եռատունդի առթիվ շնորհավորում են բոլորիս: Հայրենական մեծ պատերազմի մասնակցած գորիսեցիների դաստիարակության արդյունքն է, որ գորիսեցի քաջերը եւս կարողացան մասնակցություն ունենալ Արցախի ազատագրմանը:

Իսկ քառօրյա պատերազմի ժամանակ հայ զինվորն ու սպան իրենց մարտունակությամբ կրկին հավաստեցին, որ հայի ոգին ամուր է, որ իրենց պապերի ու հայրերի արժանի հետնորդներն են եւ նրանց արյունը սրբագործված հողում միայն հայն իրավունք ունի ապրելու, իսկ հողն այդ իրենց հայրենիքն է:

Այս վայրում վեր են խոյացել երկու սերնդի սիրանքների վկաները: Եվ այս վայրը կրառնա սուրբ, կրառնա սրբատեղի բոլորիս համար:

Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցն էլ ասաց՝ Հայրենական մեծ պատերազմի օրերին մեր դյուցազունների կողմից դրսևերկրված հերոսությունները ողջ աշխարհին ներկայացրին ամրակուռ ու առյուծասիրտ

երկնքի տակ: Ու նաև խոնարհվում են Հայրենական մեծ պատերազմը եւ Շուշիի փառապանծ հաղթանակը կերտած մեր պապերի ու հայրերի առջև՝ հավաստիացնելով, որ մեր որդիներին կտակելու ենք նրանց կյանքի գնով ձեռք բերված խաղաղությունը:

Միաժամանակ ուզում են իմ եւ բոլոր գորիսեցիների անունից շնորհակալանքի խոսքս ուղղել հարգարժան մարզպետին՝ այս հրաշալի կոթողը կառուցելու համար: Մարդու, ով, ինչպես քաղաքացիական կյանքում, այնպես էլ պաշտպանության բնագավառում եղել է եւ կա բոլոր սյունեցիների առաջնորդողն ու ոգեշնչողը:

Փառք հայ ժողովրդին, փառք Հայաստանի Հանրապետությանը:



Մասնակցում է Ս. ՍՊՐՈՅԱՆՈՒ

Գորիսի զինկոմ Սելիքսեթ Պողոսյանն իր խոսքում նշեց՝ Գորիս աշխարհը միշտ էլ գորավիզ է եղել Արցախին, եւ այսօր գորիսեցին հաղթանակած պետության քաղաքացին է, որի որդիները հաղթանակած բանակի զինվորներ են: Եվ այսօր նրանք Արցախը պաշտպանում են աղբյուրաբանական արկածախնդրություններից: Մենք Արցախի պաշտպանության բոլոր ժամանակներում նվիրյալներ կորցրինք: Փառք ու պատիվ նրանց: Քառօրյա պատերազմի ժամանակ էլ կորցրինք՝ Նարեկ Մկրտչյանին: Մեր խոնարհունը բոլոր ժամանակների նահատակներին:

Արցախյան պատերազմի ժամանակ իր որդուն է կորցրել նաև գորիսեցի Ամժիկ Հակոբյանը: Նրա որդին՝ Փոքր Սուր, հայոց հերոսների շարքում է: Ամժիկ Հակոբյանը եւս խոսք ունի ասելու: Եվ խոսքն այդ բխում է մոր սրտից, այն մայրական խոսք է՝ թող այսուհետեւ էլ հայ մայրերն առյուծ տղաներ պարգևեն հայոց աշխարհին...

Հուշարձանի բացմանը ներկա էր նաև ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

– Հայ ժողովուրդը մեծ դերակատարություն ունի Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի գործում: Հայ ժողովուրդը միասնական կերպով հաղթանակ է տարել Արցախյան պատերազմի ժամանակ: Եվ այդ ամենում երեւում է նաև Սյունիքի ուժը: Սյունյաց արծիվները, սյունյաց մարտիկները կարողացել են այս լեռներից իջնել, այս ժայռերից իջնել եւ իրենց ամբողջ ուժը ներդնել մեր հայրենիքի պաշտպանության գործին, - ասաց պաշտպանության նախարարը:

Սյունիք: Նշանակում է Արցախ: Արցախ: Նշանակում է նաև Սյունիք: Արցախի սրտի բաբախումը Սյունիքում լսում են: Երբ Սյունիքի գարկերակը խփում է, Արցախում լսում են: Երբ Սյունիքում հաց են թխում, լավաշ հացի բույրն Արցախ է հասնում, երբ Արցախում ժամգայով հաց են թխում, բուրմունքը Սյունիք է հասնում: Իսկ զուգուն-դուլի ծայրից պարուն են Արցախի ու Սյունիքի լեռները: Ու մեկը մյուսին գորավիզ, մեկը մյուսին հենված՝ գնում են ու գնալու են լուսավոր դարեր...

ԱՎԱՐԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ



Մասնակցում է Ս. ՍՊՐՈՅԱՆՈՒ



Վրթոնվար: Գ. Վարդանյան



Վրթոնվար: Գ. Վարդանյան

Վրթոնվար: Գ. Վարդանյան

Մերի, 9 մայիսի 2016թ.



Վրթոնվար: Գ. Վարդանյան

Վրթոնվար: Գ. Վարդանյան



Վրթոնվար: Գ. Վարդանյան



Վրթոնվար: Գ. Վարդանյան

Վրթոնվար: Գ. Վարդանյան

Մերի, 24 ապրիլի 2016թ.




Վրթոնվար: Գ. Վարդանյան

Վրթոնվար: Գ. Վարդանյան

ԽՈՍՔ ԴԻՇՏԱՍԿԻ

Արտավազ Աղաբեկի Մկրտչյան



Երկրային կյանքին հրաժեշտ տվեց Հայրենական մեծ պատերազմի վետերան Արտավազ Մկրտչյանը: Ծնվել է 1923 թվականին Կապանի տարածաշրջանի Լեռնաձոր գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Կապանի Շրվենանց գյուղում: 1942-45թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, որպես S-34 տանկի հրամանատար (ավարտել է Սվերդլովսկի ռազմատանկային ուսումնարանը): Ռազմաճակատում ծանր վիրավորվել է եւ ապաքինվելուց հետո՝ 1945-ի փետրվարին, զորացրվել որպես պատերազմի 2-րդ խմբի հաշմանդամ: Պարգևատրվել է «Կարմիր աստղ»-ի, «Հայրենական պատերազմի առաջին աստիճան»-ի շքանշաններով եւ մարտական մեդալներով:

1945-50թթ. ստացել է բարձրագույն կրթություն, անցել մանկավարժական եւ լրագրողական աշխատանքի: Քսանհինգ տարի կատարել է մանկավարժական աշխատանք, որից 23 տարին բաներիտ հանրակրթական միջնակարգ դպրոցի տնօրեն Քաջարուն եւ Կապան քաղաքներում, 12 տարի՝ «Քաջարան» բազմապարսպ թերթի խմբագիր եւ Քաջարանի պղնձամուլիբդենային կոմբինատի կուսկոմիտեի երկրորդ քարտուղար: 1964թ. դարձել է ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ: 1955-60թթ. եղել է Տանձավեր գյուղի կուլտնտեսության նախագահ, այնուհետեւ երկու տարի՝ Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն, մեկ տասնամյակ՝ պատմա-

կան հուշարձանների պահպանության շրջանային խորհրդի նախագահ:

1976-ից մինչեւ 1986 թվականը Հայրենական մեծ պատերազմի վետերանների Կապանի շրջխորհրդի նախագահն էր: Պատերազմի եւ աշխատանքի վետերանների խորհուրդների միավորումից հետո 1986-2002թթ. պատերազմի վետերանների սեկցիայի նախագահն էր, իսկ 2002-03թթ. պատերազմի եւ աշխատանքի վետերանների խորհրդի նախագահը:

1975թ. Կապան քաղաքի մշակույթի պալատում հիմնադրել է «Մարտական փառքի սրահը», որտեղ մեկտեղված են Երկրորդ աշխարհամարտի մասնակիցների լուսանկարները, նրանց մասին պատմող արխիվային նյութեր:

Արտավազ Մկրտչյանը նաեւ գրքեր է հեղինակել: 1998թ. ՀՀ ազգային ակադեմիայի «Գիտություն» հրատարակչությունը լուս է ընծայել նրա «Կապանցիները Հայրենական մեծ պատերազմում» գիրքը, 2000 թվականից հետո հրատարակվել է նրա «Նժդեհ» երեք մասանոց դրաման, «Հուշարձաններ» (2003թ.), «Այոնյաց արծիվների սխրանքը» (2004թ.) եւ այլ գրքեր:

Երկրորդ աշխարհամարտի մասնակցի հիշատակը վառ կմնա ճանաչողների սրտերում:

Կապանի վեդերանների միավորման խորհուրդ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Աշտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (19,25 ժամ) եւ ինֆորմատիկայի (9,25 ժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր, ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծեւ 1),
2. Փաստաթուղթ (դիմում)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ծեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Երկու լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հունիսի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի «Աշտավանի միջնակարգ» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա հունիսի 17-ին՝ ժամը 12:00-ին, «Աշտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098 58 58 48 հեռախոսահամարով:



ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայտարարվում է 2016/2017 ուստարվա առկա ուսուցման ընդունելությունը՝ հետեյալ մասնագիտությունների գծով



Մասնագիտություններ	Ընդունելության բնութայնությունները			Ընդունելության տեղ/այդ թվում			ՈՒ. վարձը (դրամ)
	Մրցութային	Ոչ մրցութային	Մյուս	մարզ	ՍՏ	մրցութային	
Մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլ(գ)*	2	18	220,000
Ֆիզիկա	Ֆ(գ)	Մ(գ)**		Հլ(գ)*	2	10	220,000
Կենսաբանություն	Կ(գ)	Ք(գ)** կամ Ֆ(գ)**		Հլ(գ)*	2	18	220,000
Դեղագործական քիմիա	Ք(գ)	Կ(գ)** կամ Ֆ(գ)**		Հլ(գ)*	2	18	300,000
Պատմություն	ՀԺՊ(գ)	Օտլ(գ) կամ ԸՊ(գ)	Հլ(գ)		2	25	300,000
Հայոց լեզու և գրականություն	Հլ(գ)	Հլ(գ)			2	25	240,000
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլ(գ)	Մ(գ)**			2	30	270,000
Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլ(գ)	Օտլ(գ)		2	28	320,000
Էլեկտրոնային տեխնիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլ(գ)*	2	20	220,000

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են մինչև ա/թ. հունիսի 1-ը, ժամը 18:00-ը:

ՀՀ երկրաբաղադրության և օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած ՀՀ քաղաքացիների, նույն տարվա գարնանային զորակոչից զորացրված դիմորդների, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտների փաստաթղթերն ընդունվում են հունիսի 25-ից մինչև հուլիսի 2-ը:

- Դիմում-հայտի հետ ներկայացվում են՝**
- ա) Լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ առտեսատ կամ դիպլոմ),
 - բ) 6 լուսանկար (3x4 սմ չափսի),
 - գ) փաստաթուղթ զինվորական ծառայության առնչության մասին,
 - դ) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր,

- ե) զինվորական գրքույկ, ծննդյան վկայական), զինվորական գրքույկ և զինվորական կոմիտեի անդամ լինելու մասին փաստաթուղթեր (զինծառայող ծնողի գոհվելու, 1-ին կամ 2-րդ խմբերի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին),
- ե) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ) դիպլոմներ,
- զ) փաստաթղթերի ընդունման և ձեռնարկման համար 1500 դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 196 712, (093) 449 866: Հասցեն՝ ք. Գորիս, Ավանգարդ 4:

ԵՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ Սյունիքի մարզի Գեղամուշի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի, ֆիզկուլտուրայի ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

- Մրցույթի մասնակիցների գիտելիքներին և մասնագիտական կարողություններին ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:
- Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.
- Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծե 1),
 - Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
 - Անձնագրի պատճենը,
 - Ինքնակենսագրություն,
 - Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մաս-

- նագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
- Մեկ լուսանկար 3x4 չափի,
 - Սյլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
 - ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորակա:
- Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
- Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հունիսի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:
- Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա հունիսի 17-ին՝ ժամը 14:00-ին, Գեղամուշի միջն. դպրոցում.
- Հասցեն՝ ք. Գեղամուշ, վերին թաղ. 4
- Տեղեկությունների համար զանգահարել (0285) 2 44 87 և (077) 76 88 36 հեռախոսահամարներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի Շամբի միջնակարգ դպրոցի (ՊՈԱԿ) դասավորի թափուր տեղի համար:

Դասավորի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

- Մրցույթի մասնակիցների գիտելիքներին և մասնագիտական կարողություններին ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:
- Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.
- Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծե 1),
 - Փաստաթուղթ /դիպլոմ/՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
 - Անձնագրի պատճենը,
 - Ինքնակենսագրություն (ծե 4),

- Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
 - Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
 - Սյլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
 - ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորակա:
- Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
- Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հունիսի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:
- Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա հունիսի 17-ին՝ ժամը 12:00-ին, Սյունիքի մարզի Շամբի միջնակարգ դպրոցում:
- Տեղեկությունների համար զանգահարել (093/ 00 59 58 հեռախոսահամարով:

Վերադարձան հաղթանակով

Մայրաքաղաքում մայիսի 7-ին և 8-ին կայացած քիթ-բոքսինգի հանրապետական առաջնությանը Կապանի «Ջանգեզուր» ակումբը (մարզիչ՝ Վիկտոր Խաչատրյան) մասնակցեց չորս մարզիկով: Բոլորն էլ արժանացան գավաթների, մեդալների և պատվոգրերի:

Սամվել Գեորգյանը (7-9 տարիքային խումբ) մինչև 20 կգ քաշայինների պայքարում (B կարգ) ճանաչվեց հաղթող, իսկ մինչև 25 կգ քաշայինների մեջ (A կարգ) արժանացավ արծաթ մեդալի: Ալեն Ջահանգիրյանը (7-9 տարիքային խումբ) մինչև 28 կգ քաշային կարգում (A կարգ) նույնպես ոսկե մեդալի արժանացավ: Մինչև 25 կգ քաշայինների մեջ (7-9 տարի-

կաններ) Ալեն Խաչատրյանը գրավեց երկրորդ հորիզոնականը, իսկ Վահե Հարությունյանը 13-14 տարիքային խմբում դարձավ բրոնզե մրցանակակիր մինչև 51 կգ քաշայինների մրցապայքարում (A կարգ):

Հանրապետական այս առաջնությանը «Ջանգեզուր» ակումբին հնարավոր եղավ մասնակցել «Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության ղեկավարության շնորհիվ (հանձնիս վարչական տնօրենի՝ անվտանգության գծով տեղակալ Արամ Գասպարյանի և ներքին անվտանգության ծառայության պետ Մխիթար Անտոնյանի), որոնց ակումբի մարզիչներն ու սաների ծնողները երախտագիտություն են հայտնում: Նրանք նաև ակումբին աջակցել են մարզական գույք ձեռք բերել (ռիմգի տատանի):

ՎԱՐՍՍ ՕՐԵՆՅԱՆ

Հաղթող ճանաչվեց Կապանի թիվ 1 ՆՈՒՅ-ը

Մայիսի 10-ին Կապանի մարմնամարզության մարզադպրոցում կայացավ ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» 2016թ. մրցույթի համայնքային փուլը, որին մասնակցում էր համայնքի տասը նախադպրոցական ուսումնական հաստատություն: Մրցույթի նպատակն է անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, նախադպրոցական երեխաների առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձեռնարկում գործուն ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզածեղերով մարզվելու կողմնորոշման ձեռնարկում:

Տասը հոգուց կազմված տվյալ ՆՈՒՅ-ի հավաքական թիմերը (5 աղջիկ և 5 տղա) մրցեցին՝ կատարելով հետեյալ վարժությունները՝ փոխանցումավազք արգելքների հաղթահարումով, խաղային փոխանցումավազք, անցում մարմնամարզական օղակների միջով, խաղային փոխանցումավազք՝ բեմիսի գնդակներով, հավաքի «Հաղթանակ» բառը:

Մրցապայքարի ավարտից ետև միավորների հաշվարկից հետո հաղթող ճանաչվեց Կապանի թիվ

1 ՆՈՒՅ-ը, երկրորդ հորիզոնականը զբաղեցրեց թիվ 4 ՆՈՒՅ-ը, երրորդը՝ թիվ 10 ՆՈՒՅ-ը, որոնց գավաթներ և հավաստագրեր հանձնեց Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը՝ շնորհավորելով հաղթանակի կապակցությամբ և շնորհակալություն հայտնելով թիմերին մասնակցության համար: Բացի հավաստագրերից՝ մրցանակային տեղ գրաված ՆՈՒՅ-երը ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության կողմից կարծանման դրամական պարգևի՝ համապատասխանաբար՝ 100 հազար, 80 հազար և 60 հազար դրամ: Ստացված գումարը բացառապես կօգտագործի մարզական գույք ձեռք բերելու համար:

Մրցույթի մարզային փուլը նախատեսվում է անցկացնել 2016թ. մայիսի 17-ից հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում:

Մարզադպրոցում անփոփոխ մնալու համար 25-ամյակին նվիրված դպրոցականների 25-րդ մարզական խաղերի ծրագրով անցկացվող մրցումների համայնքային փուլը: Մրցումներն անց են կացվել փետրվար-ապրիլ ամիսներին, մասնակցել է 12 քաղաքային և 7 գյուղական դպրոց: Հինգ մարզածեղից (բասկետբոլ, վոլեյբոլ, սեղանի թենիս, ֆուտբոլ, աթլետիկա) մրցույթներին մասնակցել է 639 հոգի, որից՝ 144 աղջիկ: Տարբեր մարզածեղերում հաղթած 24 թիմի քաղաքապետը հանձնեց գավաթներ և հավաստագրեր:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՏԱՌՎՈՒՄ 1 սենյականոց բնակարան (ծեափոխված երկու սենյակի)՝ Հունան Ավետիսյան 1ա հասցեում, 53 քառ. մետր մակերեսով, 9-հարկանի շենքի 8-րդ հարկում. վիճակը՝ բարվոք: Հեռ.՝ (093) 889 717, (0285) 5 26 28:

ՎԱՏԱՌՎՈՒՄ 2 սենյականոց բնակարան, 76.35 քմ ընդհանուր մակերեսով: Հասցե՝ ք.Կապան, Մելիք-Ստեփանյան 4, 3-հարկանի շենքի 2-րդ հարկ: Ստալինյան նախագիծ, գազիֆիկացված է, վիճակը՝ բարվոք: Չանգահարել՝ (094) 766 425:

ՎԱՏԱՌՎՈՒՄ 3 սենյականոց բնակարան: Հասցե՝ ք.Կապան, Մուշեղ Հարությունյան 10, 9-հարկանի շենքի 5-րդ հարկ: Չանգահարել՝ (094) 421 400:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՄՆԱԳՐՈՒԿՈՒՄ
«ՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՓՈՎ ԿՈՄՍՏԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՎԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԻՏ ԱՆԵՍՅԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Ռեզանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ ՕՄՍ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 1720, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 17.05.2016թ.:

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):